

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՋԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

**Վարդան ԲՈՍԱՆՁՅԱՆ**  
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Տիգրան ՍԱՖԱՐՅԱՆ**  
ԵՄՂ ասպիրանտ

Բանալի բառեր. փոքր և միջին ձեռնարկատիրություն, խոշոր բիզնես, պետական աջակցություն, փոքր և միջին բիզնեսի սուբյեկտներ, ՅՆԱ, զբաղվածություն:

Շուկայական տնտեսության շարժիչ ուժերից է հանդիսանում ձեռնարկատիրության ոլորտը, որի դերը անգնահատելի է սոցիալ-տնտեսական բազմաբնույթ հիմնախնդիրների լուծման գործում: Իր կարևորությամբ պայմանավորված, այն գրեթե միշտ գտնվել է տարբեր հետազոտողների և մասնագետների ուշադրության կենտրոնում: Դրանով հանդերձ, պետք է նշել, որ մասնագիտական գրականության մեջ ձեռնարկատիրության՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի վերաբերյալ միասնական և համընդհանուր սահմանում գոյություն չունի: Վերջինիս վկայություն կարելի է համարել ձեռնարկատիրության վերաբերյալ տարբեր մասնագետների տեսակետները, որոնք, իրենց նմանությամբ հանդերձ, այնուամենայնիվ, միմյանցից որոշակիորեն տարբերվում են: Ինչպես ցույց են տալիս վերլուծությունները, ձեռնարկատիրության տնտեսական բովանդակության վերաբերյալ մեկնաբանությունները բավականաչափ լայն են և բազմաբովանդակ: Այս տեսանկյունից, կարծում ենք, որ «ձեռնարկատիրություն» և «ձեռնարկատեր» հասկացությունների էվոլյուցիան պետք է դիտարկել հասարակական և տնտեսական զարգացման տվյալ փուլի, ինչպես նաև տնտեսագիտական մտքի զարգացման համատեքստում: Մեր կարծիքով, ձեռնարկատիրության տակ պետք է հասկանալ ինքնակազմակերպման և ինքնաիրացման ուղղությամբ անձնական, կազմակերպական և համակարգային բնույթի գործընթացներ ինչպես նոր ձեռնարկությունների ստեղծման, այնպես էլ գործողների զարգացման նպատակով: Այս առումով, ձեռնարկությունն իրենից ներկայացնում է ռեսուրսների (մարդկային, ֆինանսական, ներդրումային, տեղեկատվական և այլն) համալիր միավորում դրա հիմնադիրների և կազմակերպիչների հնարավորությունների առավելագույնս ընդլայնման նպատակով՝ նրանց պահանջմունքների բավարարման համար:

Ըստ էության, գրեթե նույն խնդիրն առկա է նաև փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) հետ կապված: Ինչպես գիտական գրականության, այնպես էլ իրավական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայումս

գոյություն չունի «փոքր և միջին ձեռնարկատիրություն» հասկացության միասնական սահմանում: Առանձին հեղինակներ հավասարություն են դնում փոքր ձեռնարկատիրության և փոքր բիզնեսի միջև՝ որպես շուկայական տրնտեսության կարևոր սուբյեկտների: Ընդ որում, գրեթե բոլոր հեղինակների կողմից հատկապես ընդգծվում է ՓՄՁ առանձնահատուկ նշանակությունը տնտեսության զարգացման գործում: Մասնավորապես, Յու. Կոչերվինը, ուսումնասիրելով ԱՄՆ-ում փոքր բիզնեսի զարգացման հիմնախնդիրները, հատկապես ընդգծում է դրա կարևոր դերակատարությունը հետպատերազմյան փուլում:<sup>1</sup> Վ. Գրիբովի կարծիքով, փոքր ձեռնարկատիրությունը կարելի է դիտարկել որպես տնտեսական վարքագծի հատուկ ստեղծագործական տեսակ, որին բնութագրական են ձեռնարկատիրական ոգին և նախաձեռնողական ստեղծագործական գործունեությունը, միաժամանակ կապված լինելով նաև սահմանափակ թվով մարդկանց որոշակի ռիսկի հետ:<sup>2</sup> Չատկանշական է, որ ամերիկյան հայտնի տնտեսագետ Պ. Դրուկերը համարում է, որ ձեռնարկատերը սեփական, նոր մանր բիզնես բացող անձն է:<sup>3</sup> Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ ԱՄՆ-ում վերջին 50 տարիներին առավել արագ տեմպերով զարգացել է ՓՄՁ ոլորտը, ինչին մեծապես նպաստել է նաև ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտներին պետության կողմից ցուցաբերված աջակցությունը: Մի շարք հեղինակների կարծիքով, փոքր բիզնեսը մանր և միջին ձեռնարկությունների համախումբ է, որոնք սահմանափակված են որոշակի իրավական նորմերով և խոշոր ձեռնարկատիրական կառույցների, ինչպես նաև պետական սեկտորի հետ միասին կազմում են միասնական ամբողջություն:<sup>4</sup> Առանձին հեղինակներ փոքր և միջին ձեռնարկությունները դիտարկում են որպես ձեռնարկատիրության առաջատար սուբյեկտներ՝ նրանց վերապահելով գլխավոր դեր: Մասնավորապես, Ս. Սմիրնովի կարծիքով փոքր բիզնեսը բաղկացած է մանր սեփականատերերի բազմաքանակ բանակից, որոնք որոշակիորեն պայմանավորում են երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական ուղեգիծը:<sup>5</sup> Իհարկե, միանշանակ չի կարելի ընդունել այն տեսակետը, որ փոքր և միջին բիզնեսն է որոշում երկրի քաղաքական զարգացման ուղեգիծը, սակայն անհերքելի է այն փաստը, որ տվյալ սեկտորը հանդիսանում է միջին խավի ձևավորման հիմնական նախարյալներից մեկը, որն էլ, իր հերթին, պետության քաղաքական կայունության գրավական է: Միաժամանակ, փոքր և միջին ձեռնարկությունները շուկայական տնտեսավարման պայմաններում հանդիսա-

---

<sup>1</sup> Кочервин Ю. Малый бизнес в США. М.: Мысль. 1965г. Стр 7-9

<sup>2</sup> Грибов В. Менеджмент в малом бизнесе. М.: Финансы и статистика. 1999г. Стр. 5

<sup>3</sup> Друкер П. Рынок: как выйти в лидеры. Практика и принципы. М.: 1992г. Стр. 31

<sup>4</sup> Малые предприятия. Под ред.В. Горфинкеля, В. Швандара. М.: Юнити. 2001г. Стр. 3

<sup>5</sup> Смирнов С. Малое предпринимательство: общественная поддержка и содействие развитию. М.: 1999г. Стр 10

նում են հասարակության տնտեսական կյանքի կազմակերպման ինքնուրույն և առավել տարածված ձևերից և զգալիորեն նպաստում են համախառն ներքին արդյունքի աճի և բնակչության զբաղվածության ապահովմանը: Համաձայն Մ. Լապուստայի և Յու Ստարոստինի տեսակետի, փոքր և միջին ձեռնարկատիրություն է համարվում այն գործունեությունը, որն իրականացվում է օրենսդրորեն սահմանված չափանիշներին բավարարող շուկայական տնտեսության սուբյեկտների կողմից:<sup>6</sup>

Պետք է նշել, որ փոքր և միջին ձեռնարկատիրության չափորոշիչների մշակումը խիստ կարևոր է, քանի որ վերջիններիս միջոցով են որոշվում տընտեսության տվյալ հատվածի և, համապատասխանաբար, նաև պետական աջակցություն ստացող սուբյեկտների շրջանակները: Խնդրի կարևորությունը մեծանում է նաև այն հանգամանքով պայմանավորված, որ առ այսօր ՓՄՁ ոլորտի սուբյեկտների դասակարգման միասնական չափորոշիչներ գոյություն չունեն: Դրա վկայություն կարելի է համարել «փոքր և միջին բիզնես», «փոքր ձեռնարկություն», «միկրոձեռնարկություն» հասկացությունների միաժամանակյա օգտագործումը գրեթե նույն իմաստով և բովանդակությամբ: Մինչդեռ, դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, ինչը պահանջում է դասակարգման հստակ չափորոշիչների մշակում և ամրագրում: Այս տեսանկյունից, միջազգային փորձը ցույց է տալիս, որ ՓՄՁ սուբյեկտների դասակարգման նպատակով, որպես կանոն, օգտագործվում են քանակական, որակական, ինչպես նաև դրանց կոմբինացիաներն արտացոլող չափորոշիչները: Պետք է նշել, որ քանակական չափորոշիչներն իրենց չափելիության պատճառով համարվում են առավել նախընտրելի և միջազգային պրակտիկայում որպես այդպիսիք, կիրառվում են աշխատողների թվաքանակը, իրացման շրջանառությունը, ակտիվների հաշվեկշռային արժեքը և այլն: Որպես չափորոշիչներ տարբեր երկրներում օգտագործում են նաև կապիտալի մեծությունը և վաճառքի ծավալը (Մեծ Բրիտանիա, Իտալիա, ճապոնիա), շուկայում ոչ մենաշնորհային դիրքը (ԱՄՆ), իրավական կարգավիճակը (Ֆրանսիա), սեփականության ձևը (Հունգարիա) և այլն:<sup>7</sup> Պետք է նշել, որ աշխատողների թվաքանակի առումով տարբեր երկրներում գործող չափանիշները միմյանցից էականորեն չեն տարբերվում, մինչդեռ տարեկան շրջանառության ծավալով տարբերությունն ակնհայտ է:

---

<sup>6</sup> Лапушта М., Старостин Ю. Малое предпринимательство. Учебное пособие. М.: Инфра-М, 2002г. Стр. 5

<sup>7</sup> Колесников А., Колесникова Л. Малый и средний бизнес: эволюция понятий и проблема определения. Вопросы экономики, 1996.№ 7.;

**Աղյուսակ 1.<sup>8</sup> ՓՄՁ դասակարգման չափանիշները**

	Աշխատողների թվաքանակ			Տարեկան շրջանառություն		
	Գերփոքր	Փոքր	Միջին	Գերփոքր	Փոքր	Միջին
ԵՄ	10	100	250	2 մլն եվրո	10 մլն եվրո	50 մլն եվրո
ՀՀ	10	50	250	100 մլն դրամ կամ 182000 եվրո	500 մլն դրամ կամ 910000 եվրո	1500 մլն դրամ կամ 2730000 եվրո
ՌԴ	15	100	250	60 մլն ռուբլի կամ 790000 եվրո	400 մլն ռուբլի կամ 5264000 եվրո	1000 մլն ռուբլի կամ 13158000 եվրո

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1-ում բերված տվյալները, ըստ աշխատողների թվաքանակի ՓՄՁ դասակարգման ՀՀ-ում գործող չափանիշներն էականորեն չեն տարբերվում Եվրամիությունում և Ռուսաստանի Դաշնությունում գործողներից: Մինչդեռ նույնը չենք կարող ասել որպես ՓՄՁ դասակարգման չափորոշիչ ընդունվող տարեկան շրջանառության ծավալների մասին: Մասնավորապես, ՀՀ-ում նշված ցուցանիշը գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունների համար զիջում է ԵՄ-ում սահմանված ցուցանիշին համապատասխանաբար 11, 12 և 18 անգամ, իսկ ՌԴ-ում գործողին՝ 4,5 և 5 անգամ:

ՓՄՁ ոլորտի կարևորությունը երկրի տնտեսական կյանքում պայմանավորված է նաև տվյալ ոլորտի սուբյեկտների կողմից զբաղվածության ապահովման, ինչպես նաև համախառն ներքին արդյունքի ձևավորման մեջ ունեցած էական մասնակցությամբ: Ըստ էության, դա առավել ցայտուն արտահայտված է զարգացած երկներում, ինչի մասին են վկայում աղյուսակ 2-ի տվյալները:

<sup>8</sup> Աղյուսակը կազմված է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի, «О государственной поддержке малого предпринимательства в российской федерации» ՌԴ օրենքի և European commission annual report on european SMES 2012/2013 հրապարակման տվյալների հիման վրա

**Աղյուսակ 2.** <sup>9</sup> ԵՄ-ում ՓՄՁ ոլորտի հիմնական ցուցանիշները 2012 թվականի դրությամբ

	Գերփոքր	Փոքր	Միջին	ՓՄՁ
	%	%	%	%
Ձեռնարկությունների թվաքանակը	92.1	6.6	1.1	99.8
Զբաղվածների թվաքանակը	28.7	20.5	17.3	66.5
Համախառն ավելացված արժեքը	21.1	18.3	18.2	57.6

Այսպես, 2012 թվականի դրությամբ ԵՄ անդամ պետություններում գրանցված փոքր և միջին ձեռնարկությունները կազմել են բոլոր ձեռնարկությունների 99.8 տոկոսը: Գերակշիռ մասը կազմել են գերփոքր ձեռնարկությունները 92.1 տոկոս ցուցանիշով: Միջին հաշվով, ՓՄՁ ոլորտն ապահովել է 66.5 տոկոս զբաղվածություն և 57.6 տոկոսով նպաստել համախառն ավելացված արժեքի ձևավորմանը:

Բացի զբաղվածության աճից և սոցիալ-տնտեսական բնույթի տարբեր խնդիրների լուծման համար նախադրյալներ ձևավորելուց, ՓՄՁ ոլորտն ունի ևս մեկ կարևոր դերակատարում, որը խիստ մեծացնում նրա դերը տնտեսության զարգացման գործում: Դա տվյալ ոլորտի մասնակցությունն է համախառն ներքին արդյունքի ձևավորման գործում: Զարգացած երկրներում տվյալ ցուցանիշն առավել քան խոսում է: Առաջատար է հանդիսանում ճապոնիան, որտեղ ՓՄՁ ոլորտն ապահովում է երկրի ՀՆԱ-ի 80 տոկոսը: ԵՄ անդամ պետություններում միջին ցուցանիշը կազմում է 58 տոկոս, իսկ Ռուսաստանի Դաշնությունում՝ 19 տոկոս: Հայաստանում նշված ցուցանիշը դեռևս համեստ է, չնայած որ գերազանցում է ՌԴ ցուցանիշին:

<sup>9</sup> European commission annual report on european SMES 2012/2013

Աղյուսակ 3.<sup>10</sup> ՓՄՁ բաժինը ՀՆԱ-ում 2012 թվականի դրությամբ

Երկիր	ՓՄՁ բաժինը ՀՆԱ-ում %
Ճապոնիա	80
Չինաստա	60
ԵՄ	58
Անգլիա	50
ԱՄՆ	50
Բրազիլիա	30
Ռուսաստան	19
Հայաստան	27

Ամփոփելով, պետք է նշել, որ ՓՄՁ ոլորտն իր այնպիսի առավելություններով, ինչպիսիք են տնտեսական կոնյուկտուայի փոփոխություններին արագ և ճկուն հարմարվելու ընդունակությունը, որոշումների ընդունման և իրականացման օպերատիվությունը, գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծախսերի համեմատաբար փոքր ծավալը, անհատի գաղափարների և ձեռնարկատիրական ձիրքի իրացման մեծ հնարավորությունները, մեծապես նպաստում է տնտեսական համակարգում գոյություն ունեցող տարբեր հիմնախնդիրների լուծմանը: Մասնավորապես, բնակչության զբաղվածության և ՀՆԱ-ի աճի պահովման գործում ՓՄՁ ոլորտի դերը անգնահատելի է: Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրության տվյալ տեսակի արդյունավետ գործունեության ապահովումը ենթադրում է համապատասխան միջավայրի ձևավորում, որին էլ պետք է ուղղված լինի այդ նպատակով իրականացվող պետական աջակցությունը:

<sup>10</sup> OECD banking statistics. [www.oecd.org](http://www.oecd.org)

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

**Տիգրան ՍԱՖԱՐՅԱՆ**

*Բանալի բառեր. փոքր և միջին ձեռնարկատիրություն, խոշոր բիզնես, պետական աջակցություն, փոքր և միջին բիզնեսի սուբյեկտներ, ՀՆԱ, զբաղվածություն:*

Հոդվածը նվիրված է տնտեսության զարգացման գործում փոքր և միջին ձեռնարկատիրության դերի և նշանակության ուսումնասիրությանը: Ներկայացվել են «փոքր և միջին ձեռնարկատիրություն» հասկացության տեսական մեկնաբանությունները և սահմանումները: Քննարկվել են տվյալ ոլորտի կենսագործունեության համար անհրաժեշտ նախադրյալները և դրանց ձևավորման խնդիրները: Ներկայացվել է փոքր և միջին բիզնեսի մասնակցությունը զբաղվածության ապահովման և համախառն ներքին արդյունքի ստեղծման գործում: Դիտարկվել են տնտեսական զարգացման ներկա փուլում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնական ուղղությունները և մեխանիզմները:

**РОЛЬ МАЛОГО И СРЕДНЕГО БИЗНЕСА В РАЗВИТИИ ЭКОНОМИКИ**

**Тигран САФАРЯН**

*Ключевые слова: малое и среднее предпринимательство, крупный бизнес, государственная поддержка, субъекты малого и среднего бизнеса, ВВП, занятость.*

Статья посвящена изучению роли и значения малого и среднего бизнеса в развитии экономики. Представлены теоретические комментарии и определения понятия «малый и средний бизнес». Обсуждены предпосылки функционирования этого сектора и задачи их формирования. Представлено участие малого и среднего бизнеса в обеспечении занятости и формировании валового внутреннего продукта. Рассмотрены основные направления и механизмы развития малого и среднего предпринимательства на данном этапе экономического развития.

**THE ROLE OF SMALL AND MEDIUM BUSINESS IN ECONOMIC DEVELOPMENT**

**Tigran SAFARYAN**

*Key words: small and medium business, large business, government support small business, subjects of small and medium business, GDP, employment*

The article is devoted to the examination of the role and importance of small and medium business in economic development. Theoretical comments and definitions of "small and medium business", prerequisites for the functioning of this sector and the problems of their formation have been presented. Participation of small and medium businesses in employment and in creation of gross domestic product, as well as the basic directions and mechanisms of development of small and medium-sized businesses at this stage of economic development have been presented in the article.